

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 11**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿԱԶՈՐԻ  
ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ  
ԱՄՓՈՓՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

«16» օգոստոսի 2016թ.

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 77.1-77.6 հոդվածների պահանջներով, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2016 թվականի փետրվարի 1-ի N 6 որոշումը՝

«Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Նորայր Սիմոնյանի, սոցիալական ապահովության և առողջապահության վարչության առաջատար մասնագետ Յողիկ Բաբայանի, ընտանիքի կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ Լյուսյա Պողոսյանի, զորահավաքային նախապատրաստության բաժնի պետ Վանիկ Խուդավերդյանի, հողաշինության և հողօգտագործման բաժնի մարզային հողային պետական տեսչության գլխավոր մասնագետ Սմբատ Խլիսայանի, գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ Գոհար Խաչատրյանի, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Անահիտ Սարգսյանի, զարգացման ծրագրերի վերլուծության բաժնի պետ Արամ Կոստանյանի, կրթության, մշակույթի և սպորտի վարչության առաջատար մասնագետ Անահիտ Մխիթարյանի, ՀՀ ԱԻՆ ՓԾ Վայոց ձորի մարզային փրկարարական վարչության բնակչության պաշտպանության բաժնի պետ, վարչության պետի տեղակալ Հակոբ Սարգսյանի և իրավաբանական բաժնի պետ Նարինե Մաղաքյանի կողմից ՀՀ Վայոց ձորի մարզի Ագարակաձորի համայնքում իրականացվեց վարչական հսկողություն ուստիկանության, սոցիալական պաշտպանության, կրթության, առևտրի և ծառայությունների, պաշտպանության, հողօգտագործման, անասնաբուժության, արտակարգ իրավիճակների և տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների նկատմամբ իրականացվող վարչական հսկողության բնագավառներում:

1. Վարչական հսկողության արդյունքների ամփոփման արդյունքում կազմվեց սույն արածանագրությունը՝ համաձայն հայտնաբերված խախտումների, հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ առաջարկությունների, ինչպես նաև հայտնաբերված խախտումների վերացման նպատակով առաջարկվող ժամկետների վերաբերյալ կից հավելվածների:

2. Առաջարկությունները նշված ժամկետում չկատարելու դեպքում այն կբողոքարկվի դատական կարգով՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Նշումներ / վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ համայնքի ղեկավարի առարկությունների և վարչական հսկողությունը իրականացնող պաշտոնատար անձանց գործողությունների վերաբերյալ/.


4. Արձանագրությունը կազմված է երկու օրինակից, որից մեկ օրինակը հանձնվում է ՀՀ Վայոց ձորի մարզպետարանին, իսկ մյուս օրինակը ներկայացվում է Ագարակաձորի համայնքի ղեկավարին:

**Նորայր Սիմոնյան** (աշխատանքային խմբի ղեկավար)




/ստորագրություն/

**Արամ Կոստանյան** (աշխատանքային խմբի անդամ)



/ստորագրություն/

**Վանիկ Խուդավերդյան** (աշխատանքային խմբի անդամ)



/ստորագրություն/

**Նարինե Մաղաքյան** (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն/

**Անահիտ Սարգսյան** (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն/

**Յողիկ Բաբայան** (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն/

**Անահիտ Մխիթարյան** (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն/

**Լյուսյա Պողոսյան** (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն/

**Սմբատ Խլիսաթյան** (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն/

**Գոհար Խաչատրյան** (աշխատանքային խմբի անդամ)




/ստորագրություն/

**Հակոբ Սարգսյան** (աշխատանքային խմբի անդամ)



/ստորագրություն/

**Պ.Միրզոյան** (Ագարակաձորի համայնքի ղեկավար)



/ստորագրություն/

**2016 թվականի երրորդ եռամսյակում ՀՀ Վայոց ձորի մարզի Ագարակաձորի համայնքում իրականացված վարչական հսկողության ընթացքում հայտնաբերված թերությունների վերաբերյալ տեղեկանք**

**Ագարակաձորի համայնք**

**Հավելված 1. Արտակարգ իրավիճակների բնագավառ**

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>1. Տարահանված բնակչության կենսաապահովում. Բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլանի առկայություն:</p>			<p>✓ պլանը չի մշակվել</p>	<p>Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2010 թվականի հունիսի 24-ի N 824-Ն որոշման 3-րդ կետի պահանջները, համաձայն որի պետք է մշակվեր բնակչության կենսաապահովման գործընթացների նախապատրաստման միջոցառումների պլան</p>	<p>առաջարկվում է մշակել միջոցառումների պլանը համագործակցելով մարզի տարահանման հանձնաժողովի և ՀՀ ԱԻՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հետ</p>	<p>15.03.2017թ.</p>
<p>2. Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանություն. Համայնքի ղեկավարի կողմից մշակված, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության համապատասխան տարածքային ստորաբաժանման ղեկավարի հետ համաձայնեցված, համապատասխան պետական կառավարման տարածքային մարմնի ղեկավարի կողմից հաստատված ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի առկայություն:</p>			<p>✓ պլանը չի մշակվել,</p>	<p>Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2011թ հունիսի 10-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N919-Ն որոշման 3-րդ կետի պահանջները, համաձայն որի համայնքի ղեկավարի կողմից պետք է մշակվեր ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլան</p>	<p>առաջարկվում է մշակել պլանը սահմանված կարգով</p>	<p>մինչև 01.03.2017թ.</p>
<p>3. Ուժեղ երկրաշարժի դեպքում գործողությունների պլանի իրականացման համար՝ պլանների համակողմանի ապահովման մասին հայտերի ներկայացում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն</p>			<p>✓ հայտեր չեն ներկայացվել</p>	<p>Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2011թ հունիսի 10-ի «Ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ բնակչության պաշտպանության կազմակերպման պլանը հաստատելու մասին» N919-Ն որոշման 7-րդ կետը, համաձայն</p>	<p>առաջարկվում է ներկայացնել անհրաժեշտ հայտեր</p>	<p>մինչև 01.12.2016թ</p>

				որի ուժեղ երկրաշարժի դեպքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն գործողություններ ի պլանի իրականացման համար՝ պլանների համակողմանի ապահովման մասին հայտեր պետք է ներկայացվեն		
4. Համայնքների ղեկավարների կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտերի ներկայացում, սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի առկայություն		V /Համայնքի ղեկավարի կողմից սեյսմիկ ռիսկի գնահատման աշխատանքների կատարման հայտ է ներկայացվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն/ սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ առկա չէ		Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի թիվ 1351-Ն որոշման 2-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները՝ համաձայն որի համայնքը պետք է ունենա սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզ	Ֆինանսական հնարավորությունների առկայության դեպքում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել տեխնիկական առաջադրանք սեյսմիկ ռիսկի գնահատման քարտեզի մշակման նպատակով	Ֆինանսական հնարավորությունների առկայության ժամանակ
5. Համայնքների զարգացման ծրագրերում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումների ներառում			V Համայնքի զարգացման ծրագրում սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ ներառված չեն	Չեն պահպանվել ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 25-ի N 1351-Ն որոշման պահանջները՝ համաձայն որի համայնքի զարգացման ծրագրում պետք է ներառված լինեն սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ	Առաջարկվել է համայնքի զարգացման ծրագրերում նախատեսել սեյսմիկ ռիսկի նվազեցման միջոցառումներ	Մինչև 01.01.2017թ.

## Հավելված 2. Պարտադիր լիազորությունների բնագավառ

Դրույթների անվանումը	Պահպանված է	Թերի է պահպանված	Պահպանված չէ	Հայտնաբերված խախտումները	Առաջարկություններ հսկողության ընթացքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ	Հայտնաբերված խախտումները վերացնելու նպատակով սահմանված ժամկետները
1	2	3	4	5	6	7
<p>1. Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p>			<p>✓ «Համայնքի ավագանին որոշում է ընդունում համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին» «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով &gt;&gt;:</p>	<p>Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>Չի պահպանվել</u> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 27-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերը, դրանց փոփոխությունները, ինչպես նաև նախագծման առաջադրանքները հաստատելու մասին որոշում կայացնի</p>	<p>Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ</p>	<p>Մինչև 2017 թվականի հունվարի 1-ը</p>
<p>2. Համայնքի քաղաքաշինական կանոնադրության հաստատման վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p>			<p>✓ «Համայնքի ավագանին հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, ինչպես նաև ՏԻՄ օրենքի 37-րդ հոդվածի երկրորդ մասի 3-րդ կետով սահմանված քաղաքաշինական այն փաստաթղթերը, որոնց պատվիրատուն է համայնքը &gt;&gt;:</p>	<p>Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>Չի պահպանվել</u> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 28-րդ կետի պահանջը, համաձայն որի համայնքի ավագանին հաստատում է համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը</p>	<p>Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ</p>	<p>Մինչև 2017 թվականի հունվարի 1-ը</p>
<p>3. Համայնքի հողերի օգտագործման սխեմաները հաստատելու վերաբերյալ համայնքի ավագանու որոշման առկայություն:</p>			<p>✓ «Համայնքի ավագանին հաստատում է համայնքի հողերի օգտագործման սխեմաները»&gt;&gt;:</p>	<p>Դրույթի պահանջները պահպանված չեն, <u>Չի պահպանվել</u> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 28.1-րդ կետի պահանջը՝ համաձայն որի ավագանին պետք է հաստատի համայնքի հողերի օգտագործման սխեմաները</p>	<p>Առաջարկվել է ձեռնարկել միջոցներ դրույթի պահանջները պահպանելու ուղղությամբ</p>	<p>Մինչև 2017 թվականի հունվարի 1-ը</p>
<p>4. Համայնքի ղեկավարի որոշմամբ հաստատված աշխատակազմի գործավարության կարգի առկայություն:</p>			<p>✓ Համայնքի ղեկավարը հաստատում է աշխատակազմի</p>	<p>Դրույթը պահպանված չէ, <u>Չի պահպանվել</u> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-</p>	<p>Առաջարկվել է առաջնորդվել օրենքով սահմանված կարգով</p>	<p>1 ամիս</p>

		գործավարության կարգը	րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները՝ համաձայն որի համայնքի ղեկավարը որոշում է ընդունում աշխատակազմի գործավարության կարգի վերաբերյալ		
--	--	----------------------	---	--	--